

ԿՈՉ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Գերագույն Խորհուրդը 1 Դեկտեմբերին միաձայնությամբ որոշեց անընդունելի համարել Կենտրոնական Գերագույն Խորհուրդի 28 Նոյեմբերի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, այն համարելով ոտնահարում ազգությունների ինքնորոշման իրավունքի:

Մեր հայրենի կառավարության ու համայն մեր ժողովուրդի հետ խորապես հուզված ենք ու մտահոգ: Այս առթիվ կարծում ենք, որ մեր Մայր Եկեղեցին ի գլուխ իր հոգևոր սպասավորների, բոլոր օրինավոր ազդու միջոցներով նաև սփյուռքում պարտի պաշտպան կանգնել Հայաստանի Գերագույն Խորհրդի որոշման և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի, որ հայտարարված է անբաժան մասը մայր Հայաստանի:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք, զի Աստուած ընդ մեզ է»:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 դեկտեմբեր 1989 թ.